

ազգային դպրոցները: Սպանիական ազգային երաժշտութեան ներկայացուցիչները կ'ըլլան Albeniz, Granados, De Falla, ուսումնական ազգային դպրոցը Glinka-է վերջ կը ներկայացուի Rimsky-Korsakov-ով, Moussarsky-ով, Tchaikovsky-ով, Balakirev-ով:

Փերմանական վիպապաշտ opéra-ն Weber-է վերջը R. Wagner-ով, գեղեցկութեան, խորութեան գագաթնակէտին կը հասնի: Wagner-է վերջը իր գործը կը շարունակէ K. Strauss.

Ֆրանսական opéra-ն կը յառաջդիմէ շնորհիւ Meyerber-ի, Berlioz-ի, Gannad-ի և Bizet-ի: Իսկ իտալականը կ'արտադրէ Rossini-ն, Donizetti-ն, Bellini-ին և յիշածաներէն շատ աւելի խորունկ հեղինակ մը՝ Verdi-ն (Aida): Ի. գարուն սկիզբը Debussy և Ravel ֆրանսացի երաժշտները կը հիմնեն նոր ուղղութիւն մը իրենց opéra-ններով՝ ապաւորապաշտութիւնը: Աւելի Debussy է իր "Poleas et Melisande"-ով հիմնագիրը, որ ամէն երկրի մէջ կ'ունենայ իր հետեւորդները:

Իսկ Debussy է վերջը մինչև հիմա կը գտնուինք շրջանի մը մէջ, ուր ամէն մարդ կը փորձարկէ և կը փորձէ:

Ի. գարուն մեծ երաժշտներէն են նաև Elgar (անգլիացի), Macdowell (ամերիկացի), Strauss (գերմանացի), Schouberg (աւստրիացի), Bartok (հունգարացի), Scriabin և Stavinisky (ռուս):

Ամէն պարագայի փորձարկեն, փորձեն կամ ուրիշներու հետեւին Ի. գարուն տրամաններն են վերոյիշեալները՝ որ հսկայաքայլ կը յառաջանան: Իսկ եթէ շատ չենք ծափահարիր իրենց գործերը՝ կրնայ ըլլալ որ մեր չհասկնալուն պատճառաւ է:

Ամէն պարագայի երաժշտութեան պատմութեան ամենէն հետաքրքրական ժամանակին մէջ կը գտնուինք՝ և մեզի կը մնայ համբերել, յուսալ և սպասել, նայելու համար թէ այս գերմարդկային ճիգերը ո՞ւր պիտի հասցնեն երաժշտութեան մեծ, նոր աշխիւրաները:

ՕՆՆԻԿ ՌԻՊՈՐԹԵՐՆ

(Պ. Կրք՝ Թ)

## ԼԵՋՈՒՄԳԻՏԿԱՆ

### Ե. ԴԱՐԻ ՀԱՅԵՐԷՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

Ուկրաիններէն ոմանց համար լեզու է, ուրիշների համար ռուսներէնի մի բարբառը: Սպաններէնը և պորտուգեղներէնը համարուում են երկու տարբեր լեզուներ, բայց նրանց միջև եղած տարբերութիւնը աւելի փոքր է քան հայերէնի ու ղոկերէնի և սակայն այս վերջինը համարուում է բարբառ: Այսպիսի օրինակներ բազմաթիւ են: Իսկ բարբառներին և ենթաբարբառներին տարբերութիւնը շատ աւելի անորոշ է: Հնդհանուր սկզբունքն այն է որ երբ երկու անհատ իրար չեն հասկանում, այդ տեղ բարբառ կայ: Իսկ երբ հասկանում են իրար առանց դժուարութեան, այդ տեղ ենթաբարբառ կայ: Բայց չհասկանալու և հասկանալու միջև կան անհուն աստիճաններ և անշուշտ այդ հասկացողութիւնը կամ անհասկացողութիւնը յառաջանում է նաև մարդու սեփական ընդունակութիւնից: Շատ անգամ միջ համար անհասկանալի է դառնում բարբառը, երբ այսինչ անձն է խօսում, բայց մի ուրիշի բերանում նոյն բարբառը հասկանալի է դառնում: Միևնույն բարբառը անհասկանալի է երբ ականջով ենք լսում, իսկ երբ գրաւոր ենք կարդում, աւելի հասկանալի է դառնում:

Այս բոլորը նկատի առնելուց յետոյ, այժմ հարց տանք թէ Ոսկեզարի բարբառները ի՞նչ աստիճան էին ներկայացնում: Երկայն էին որ հայերը իրար չէին հասկանում, թէ ընդհակառակը արտասանական և այլ չնչին տարբերութիւններ միայն կային, որոնք գրաւորի վերածուելու ժամանակ արդէն ջնջւում էին:

Այս հարցին մենք կարող ենք պատասխանել տեսականորէն եւ գործնականորէն:

Տեսականորէն մենք կարող ենք դատել հետեւի ձևով:

(\*) Շարահանութիւն՝ մեծաւն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» զործն (ԺԸ. Գլուխ):



Գրտեանք որ Մեսրոպը հնարելով հայերէն գիրը՝ նպատակ ունէր քրիստոնէական քարոզչութիւն. նա ուզում էր տալ ժողովուրդին Ս. Գրիքը՝ նրան հասկանալի լեզուով: Մեսրոպ երկար տարիներ ծան է գալիս Հայաստանի զանազան կողմերը, թէ պարսկական արեւելեան Հայաստան և թէ յունական արեւմտեան Հայաստան. ինքը ծննդեամբ Տարօնեցի և Այրարատի քանկիւ, գնում է Գողթն, Սիւնիք, Արցախ, Փայտակարան և այլ նահանգներ, ամէն տեղ խօսում, քարոզում, գործում զըպրօցներ է բաց անում և հայ գիր է սովորեցնում: Ինչպէ՞ս են իրան հասկանում: Նոյնը անում է նաև Վրաստանում և Աղուանքում, որոնց համար հնարել էր այբուբեն և թարգմանել է տալիս Ս. Գրիքը նրանց լեզուով: Արդ եթէ Արարատեան բարբառը, որով թարգմանում էր Ս. Գրիքը հասկանալի չլինէր Հայաստանի զանազան գաւառներին և Վրաց ու Աղուանից գոնէ սակաւաթիւ ուսումնականներին, էլ ի՞նչ նպատակ ունէր այդ քարոզչութիւնը կամ այբուբենի ուսումը և Ս. Գրիքի թարգմանութիւնը: Իսկ եթէ այդ թարգմանութիւնը տարածւում է ամէն տեղ, նշանակում է որ ժողովուրդը փոքր ջանքով կարող էր հասկանալ այդ լեզուն:

Գործնականորէն դատելով հարցը՝ մենք մեր առաջ գնենք Աբարատեան (Եղնիկի) բարբառը և արեւելեան (Կորիւնի) բարբառը, որ նախորդ քննութիւններով ձեռք բերինք, և համեմատենք իրար հետ: Ոչ մի էական տարբերութիւն չկայ այդ երկուսի մէջ. նոյն են բոլոր բառերը, նոյն են ամբողջ հոլովումն ու խոնարհումը, նոյն են շարագատութիւնը և համաձայնութիւնը. մի խօսքով երկուսն էլ միեւնոյն լեզուն են: Նորայր, էլ 262, գտնում է որ հանդերձ բառը Կորիւնի խմբի մէջ հոլովում է ու հոլովման համաձայն, հանդերձոյ, հանդերձով, ընդամէնը չորս անգամ, մինչդեռ միայնակ գրականութեան մէջ հոլովում է միշտ ի ձեռով. միայն մի անգամ կայ ի հանդերձոյ ձեռ՝ Ղևտ, ԺԱ. 32: Արդարեւ մեծ տարբերութիւն, որի վրայ կարելի է բարբառ հիմնել:

Այն բոլոր տարբերութիւնները որ մենք տեսանք Կորիւնի բարբառում, ոչ մի էական արժէք չունին և ներկայացնում

են միեւնոյն հայերէն լեզուն: Ի՞նչ էական տարբերութիւն կայ եթէ մէկը խոստանարակ լինել սաի և մի ուրիշը խոստանարակ ուսել. եթէ մէկը գիրի կամ բաժակի մասնաւոր աօր և մի ուրիշը բաժակի ի ձեռն: Եւ կամ աւելի խիստ ձեւերից խօսելով՝ եթէ մէկը ուրիշ ձեռով բարդութիւններ կազմի (նեղութիւնակիր, քաւութիւնաբեր են.) և մի ուրիշ այդպիսի ձեւեր չգործածի. եթէ մէկը անցեալ դերբայ գործածի (իրբե հասեալ), իսկ միւսը դիմաւոր բայ (իրբե բաժն), Այս տարբերութիւնները այնքան անարժէք են, որ թոյլ է տրուած միեւնոյն Ս. Գրքի մէջ երկու տարբեր բարբառների գոյութիւնը. Հին Կտակարանի ամենամեծ մասը և Նոր Կտակարանի ամբողջ Արարատեան բարբառովն են, միայն Մակարայեցւոյ զբրքերը Կորիւնի բարբառով են: Եւ այս երկու բարբառները կողք կողքի պարել են միշտ, առանց որեւէ անպատեհութեան, առանց որեւէ գոռաւորութիւն կամ թիւրիմացութիւն առաջացնելու և չպիտի էլ ճանաչուէին, եթէ չլինէր Նորայրի սուր դիտողութիւնը:

Գլխաւոր տարբերութիւնը երկու բարբառների միջև, ինչպէս նախորէն ասացինք, մի քանի նոր բառերի գոյութիւնն է (աարուշան, նուաք, գումարտակ, զըղեակ, կղեր և ի հարկէ ուրիշներ էլ), կամ որոշ բառերի տարբեր իմաստով գործածութիւնը. ինչպէս միամտութիւն (հաւատարմութիւն) արեւելեան բարբառում կամ այլ (քամի) ստորին Հայաստանի բարբառում: Սրանք սակայն նոյնպէս բարբառի էութիւնը չեն կազմում: Բարբառի էութիւնը կազմող տարրերն են ձայնաբանութիւնն ու քերականութիւնը:

Այս բոլոր մեր քննութիւններից հետեւում է այն՝ որ Ոսկեդարում հայերէն բարբառներ չկային. Հայաստանը չէր ներկայացնում մի այնպիսի երկիր, ինչպէս Յունաստանն է, որ բաժանուած էր զանազան բարբառների և որոնք զրազան գործերի մէջ էլ պահում են իրենց գոյութիւնը (յոնիական, ատտիկեան, դորիական են.): Հայաստանի զանազան գաւառների ժողովուրդները իրար հասկանում էին հեշտութեամբ և զրազան ու ժողովրդական լեզուների միջև խտրութիւն չկար: Այն տարբերութիւնները որ կարելի էր նկատել

զանազան գաւառների խօսակցութեան միջև կազմում էին ոչ թէ բարբառային տարբերութիւններ, այլ աւելի ճիշտ բառով ենթաբարբառային:

Այս եզրակացութեան կը հասնինք մենք նաև բողոքովին այլ նախապարով, արդի այլ և այլ բարբառների համեմատական քննութեամբ: Համեմատելով արդի հայ բարբառները իրար հետ, դուրս բերելով նրանք կազմող տարբերութիւնները, եւ մտաւորապէս յետ յետ տանելով նրանք առաջ բերող զարգացման և բարելորդութեան ընթացքը, կը գտնենք որ բոլոր այդ բարբառները ունին մի ծագում, նրանց հասարակաց աղբիւրը Ոսկեգարի հայերէնն է, ուրիշ խօսքով Յ. դարի զարբարը:

Այս մանրամասն քննութիւնը մենք պահում ենք գլխին:

Այս եզրակացութիւնը որին մենք հասնել տարօրինակ չլպչաք է թուի. նման օրինակներ շատ կան այլուր. տաճկերէնը որ առնուազն 600 տարուց ի վեր խօսուում է Տաճկաստանում, ոչ մի բարբառային տարբերութիւն չկէ ներկայացնում սկսած Պարսկաստանի սահմանից մինչև Աղբիականի եղբրքը. ռուսերէնը Լենինգրադից կամ Մուրմանից մինչև Սիբիր և Վլատկովաստոկ մինչև Նոյն լեզուն է. մալաշերէնը որ մի փոքր խումբ աշխարհակալների Մալայան կղզիներից փոխադրեց Մազապախարի մեծածաւալ կղզին Յ. Բ. առաջին դարերին բոլորովին օտար մի աշխարհ և օտար ցեղերի մէջ, ոչ միայն տարածուեց ամբողջ կղզում ընջելով տեղական բնիկ լեզուները, այլ և ոչ մի բարբառ չի ներկայացնում այսօր, հազար տարւայ ընթացքում, ունենալով հանդերձ 3 միլիոն խօսող:

Հայ բարբառների մասին խօսել են նաև, թէ է նոյն իսկ Յ. դարից աւելի ուշ, մեր հին քերականներից Թրակացու քերականութեան թարգմանիչը՝ Դաւիթ մեկնիչ, Անանուն մեկնիչ, Մովսէս քերթող և մանաւոր Սահփանոս Սիւնեցի:

Դիտենքու թրակացու յունարէն քերականութեան մէջ ընդհանրաբար խօսք է լինում յունարէն բարբառների մասին (ինչպէս Նուրիացոց և Դորիացոց) և մէջ է բերւում այս բարբառներից զանազան ձևեր: Հայ թարգմանը և մեկնիչները (Դաւ-

ւիթ, Անանուն և Մովսէս) սրանց համապատասխան զնոււմ են հայոց Գորգայ կամ Կորճայ բարբառը՝ չորս հետեւեալ վկայութեանց մէջ:

1. Թրակացին, էջ 14, յոյն բնագրում, արական հայրանունների համար իբրև մասնիկ յիշում է երեք՝ դեռ Ատրիդէս, ոմ Ատրիյոն (և ըստ Նուրիացոց բարբառին աղիոս հիւրագիրոս).— հայ թարգմանը իբրև հայերէն հայրանունների մասնիկ յիշում է եմ, էլ, իք, գեմ, եմ, ալ և սրանց համար օրինակ է տալիս Սամէն, Մանուէլ, Մանիթ, Բաբգէն, Մանէճ, Արտակ. և որպէսզի հեռլիական բարբառին էլ համապատասխան մի բան գտնի, աւելացնում է զեռ Գորգայիցն ինքեանց զաղափար յատկական, որպիսի Մանայիճո. Նոյնը կրկնում են միւսները. Եւ Գորգայիցն իւրեանց զաղափար յատկական Մանայճ (Անանուն մեկնիչ, էջ 140). Եւ ըստ Գորգայիցն Մանայճ (Մովսէս քերթող, էջ 170):

2. Դաւիթ մեկնիչ, էջ 105, Դորիական բարբառը բացատրելու համար ասում է. «Դորգայիցն զաղափար է. զի որպէս գործ ծեցելով ի համանուն լեզուէ ի խօսս, նմանապէս և ի հոռոմին Դովրացի իմն անուանեալ լեզու»:

3. Նոյն մեկնիչը, էջ 112, խօսելով բայի սեռի վրայ՝ ասում է թէ նեղգործական է գաննում, կրաւորականը զանիւմ, միջինը (իմա հասարակը)՝ մոռացայ գոգ կամ մոռացեալ եղէ: Ուզում է ասել թէ մուռանամ բայը թէ իբրև նեղգործական է գործածուում և թէ իբրև կրաւորական՝ «մոռացուիլ» նշանակութեամբ: Եւ աւելացնում է. «բայց յայլ վայրս, որպէս Կորճայք, վարին կրականին (իմա կրաւորական բայ) ոչ համարար, այլ ըստ սովորութեան»:

4. Անանուն մեկնիչ, էջ 147, բայերը ըստ կազմութեան բաժանում է երկու տեսակի. նախազաղափար և ածանցական. օրինակ ոռոգեմ նախազաղափար է, իսկ ոռոգանեմ՝ ածանցական: Եւ աւելացնում է. «Եւ պարտ է գիտել իթէ ըստ մերումս բարբառոյ նախազաղափարաւ վարին Կորճայք միայն իսկ ածանցական՝ ոռոգանեմ. արդ այսպէս և այլքն ամենեքեան»:

Այս բոլորից հետեւում է այն ժամանակներում Գորգայ կամ Կորճայ կոչուած

մի բարբառի գոյութիւնը, որի առանձնա-  
յատկութիւններից յիշուում են. 1. Մա-  
նայէ ձեւը փոխանակ Մանէճ. 2. Կրաւու-  
րականի իմ վերջաւորութեան տեղ եմ ձեւի  
գործածութիւնը. 3. Բայերի անմի վեր-  
ջաւորութեան տեղ եմ:

Սակայն հայ բարբառների գոյութեան  
մասին շատ աւելի լրիւ կատար տեղեկութիւն  
է տալիս Ստեփանոս Սիւնեցին իր քերա-  
կանութեան մէջ, էջ 187:

Այստեղ նա խօսելով լեզուագիտու-  
թեան մասին, ասում է թէ մարդ որպէսզի  
լաւագոյն կերպով կարողանայ հմտանալ իր  
լեզուին, պիտի իմանայ նախ՝ շրջակայ  
ազգերի լեզուն (որ շուրջ դքե՝ սահմա-  
նակից աշխարհք իցեն՝ գիտութիւն լեզ-  
ուաց նոցա), երկրորդ՝ իր լեզուի բար-  
բառները և երրորդ՝ հին լեզուների (հրէից  
են.)։ Երկրորդի մասին՝ որ մեզ համար  
կարեւորագոյնն է, ահա իր բառերը. «Եւ  
բարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանգակ  
զբառնս զեղերակախս, որպէս զԿորճայն և  
զՏայեցին և զԽութայինն և զՋորրորդ Հա-  
յեցին և զԱպերացին և զՍիւնիկն և զԱր-  
ցախայինն. այլ մի՛ միայն զՄիջերկրայան և  
զոստանիկան, վասնզի պիտանիք այսոքիկ  
են ի տաղաչափութեան. այլ և օգտակար  
ի պատմութիւնսն, զի մի վրիպեցի ան-  
ընտել գովով լեզուացն»:

Ի՞նչ է ուղում ասել Սիւնեցին այս  
խօսելով. յիշեալ եօթը անունները լեզու-  
են թէ հայերէնի բարբառներ: Ըստ տեղ-  
ւոյն դատելով անշուշտ բարբառ են, որով-  
հետեւ զընում են երկրորդ, այն է բար-  
բառների շարքում. լեզու ինկելու գէպ-  
քում պիտի յիշուէին առաջին խմբի մէջ:  
Սակայն ինչպէս երևում է, Սիւնեցին բար-  
բառ է համարում նաև միևնոյն երկրի կամ  
պետութեան մէջ խօսուած զանազան լե-  
զուները: Այսպէս չնայած որ նախորդ հաշ-  
ւով Սիւնիկ բարբառ պիտի լինէր, քիչ յի-  
տոյ դառնում է առանձին լեզուն. «Եւ  
զտանի սա յուրմագոյն ի Պարսից և յԱղ-  
ուանից և ի Սիւնեաց լեզուին, զի երկա-  
նունք և եռանունք են յուրմք. որպէս՝  
Նիւ-դաստ, Նիւ-ձոսրով, Ջուան-ձոսրով,  
Վարազ-ձոսրով, Վարազ-Տրդատ և որք  
այսպիսիք (էջ 205): Պարսկերէնի և Աղ-  
ուաներէնի հետ մէկ գծի վրայ յիշելը  
ցոյց է տալիս՝ որ Սիւնիկն էլ առանձին

լեզու է և ոչ բարբառ, և հետեւաբար վե-  
րոյիշեալ եօթը անուններն էլ առանձին  
լեզուներ են և ոչ թէ բարբառներ:

Սիւնեցու յիշեալ հատուածի քննու-  
թեամբ զբաղուել է յատկապէս Հիւրշման,  
Արմենիշէ գրամ. էջ 519: Նա հաստատում  
է որ յիշեալ եօթը անունները առանձին  
լեզուներ են և ոչ թէ հայերէն բարբառ-  
ներ: Այսպէս հաստատապէս օտար լեզու  
էր խութայինը, որ ըստ Թովմաչէի, Սասուն  
ունգ փուլի գեթիս դես Թիգրիս, Վիսուն  
1895, մինչև Ժ. դարը խօսուած էր ինչի՞  
գաւառում օտարացել մի ժողովուրդի մէջ.  
Հայ չէին նաև Տայեցիք, Տայքի հին քնա-  
կիչները, որ Գեհնուփոնը Տասօթոյ անունով  
յիշում է Խալիբնիքի և Փասխանացոց հետ  
և հայերից բաժանում է: Ապերացին էլ  
նոյնպէս առանձին լեզու էր, որ խօսում  
էին Ապերացիք և որ յիշում է Հերոդոտը՝  
Իբրեւ առանձին ազգութիւն Սասպիյեի  
ձեռով: Դարձեալ Ջորրորդ-Հայեցին հին  
Մոփաց նահանգի արամայեցի ազգաբնա-  
չութեան լեզուն էր: Կորճայք և Արցախ  
թէև Մովսէս Խորենացու աշխարհագրու-  
թեան մէջ իբրեւ Հայաստանի գաւառներ  
են յիշուած, բայց աւելի հին պատմագիր-  
ներ իբրեւ օտար երկրի և ժողովուրդ են  
յիշում. օր. Եղիշ. 10 և 39, ուր Կորդուք՝  
հայերի հետ յիշուած են վրացոց, աղուա-  
նից և ուրիշ քրիստոնեայ օտար ժողո-  
վուրդների կողքին. — Եղիշ. 72 Տմորիք,  
Կորպիք, Արցախ, Աղուանք, Վիրք, Խաղ-  
տիք. — Եղիշ. 97 Խաղտեաց մուծ երկի-  
րը, Տմորիքի անհասանելի ամրութիւննե-  
րը, Արցախի թանձր անտառները. — Բուզ. 159  
ամօր գաւառն Արցախ, ամօր գա-  
ւառն Տմորիք, ամօր երկիրն Կորդիք,  
Իշխանն գաւառին Կորդուաց. — Բուզ. 209-  
210 Նորշիրական, Կորդուք, Կորդիք, Տմօ-  
րիք, Մարք, Արցախ, Աղուանք ևն. —  
Փարպ. 369 Ատրպատական, Կորդիք, Կա-  
տիք. — Ագաթ. 628, Սեբ. 60. — Լաւ  
Հիւրշմանի ցանկից դուրս է մնում միայն  
Սիւնիկ, բայց դա էլ հաստատուած է, ինչ-  
պէս տեսանք, Սիւնեցու մի այլ վկայու-  
թեամբ: Այսպէսով ահա յիշեալ եօթը ա-  
նունները ոչ թէ հայ բարբառներ էին, այլ  
Հայաստանում խօսուած մանր լեզուներ.  
Կորճայքը հաւանաբար քրդական մի բար-  
բառ էր:

Ստեփաննոս Սիւնեցու վկայութիւնը մի կողմ դնելով՝ դառնաճ գործնալ մեկնելներէր Գորգայ կամ Կորճայ կողմին: Ո՞րն է այս երկու ձեւերից ուղիղը. — Գորգայ ձեւը յիշում են Թրակացիք, Անանունը, Մովսէսը և Դաւիթը՝ մի մի անգամ. Կորճայ ձեւը յիշում են Դաւիթը և Անանունը մի մի անգամ: Հին և հարազատ ձեւը ուրեմն Գորգայ է: Այս բառը ըստ իս նշանակում է «ամրիկ», «զոհհիկ», եւ բնաւ կապ չունի Կորճայքի հետ՝ որ ըստ Սիւնեցու առանձին լեզու է: Գորգայ բառը աւելի յետոյ շնչուելով լեզուից և այլեւ անհասկանալի դառնալով Թրակացու յաւելուած բառացանկում մի անձանօթ մեկնել կարիք է դրացել բացատրելու և անշուշտ իրար կապելով Գորգայք, Կորգուք և Կորճայք, աւելացրել է այնտեղ «Գորգէիցն» Կորճէիցն բացատրութիւնը, էջ 61: Սրանից յետոյ միւս հեղինակները (Դաւիթ և Անանուն) սկսել են սխալմամբ անիտոր գործածել երկու ձեւերը իբրեւ հոմանիշ:

Ինչ էլ որ լինի, ճշտուում է Գորգայի՝ իբրեւ առանձին ժողովրդական բարբառի գոյութիւնը և երեան են զայիս նոյնիսկ այս բարբառի երեք առանձնայատկութիւնները՝ որ յիշեցինք վերում: Բայց այս առանձնայատկութիւններն էլ չեն ներկայացնում այնպիսի մեծ տարբերութիւններ, նոյնիսկ Ս. դարից բաւական ուշ լինելով, որ կարելի լինի սսել թէ դա իրօք բարբառ է, այլ մի միայն ենթադրաբար: Եթէ Գորգաների մէջ աւելի ուժեղ լեզուական որեւէ տարբերութիւն լինէր, անշուշտ քերականները պիտի յիշէին և առանձնապէս պիտի շեշտէին այդ տարբերութիւնը, քանի որ պարուսակ էին փնտռում բարբառների հետքեր գտնելու, և Դիոնիսիոս յիշած յունական բարբառներին համապատասխան մի բան գտնելու հայերէնի մէջ:

ՊՐՈՓ. Հ. ԱՃԱՌԵՍՆ

(Տարաւելիւ)



## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Նորին Ամենապատուութեան հրահանգով և յանձնարարութեամբ, Դեկտեմբերի սկիզբը, Պալատս մեկնեցայ վանաբնակ աղիտեալներու համար հանգստակութեան պաշտօնով:

Ուրախութեամբ եւ յարգանքով պատրաստ կը զգամ այս եջերէն յայտնելու քե իրաքի Հայոց Վաշտութիւնը եւ բովանդակ հասարակութիւնը իր յարգանքի եւ սրբի պատահանութեան մէջ չթերացաւ եւ ընդառաջելով մեր խնդրանքին բաւ իր լաւագոյնը որպէսզի հանգստակութեան այս գործը կարելի աղիւնաւորութեամբ պսակուի:

Մեր առաջին գործը ելաւ, խորհրդակցութեամբ իրաքի Հայոց Փաղարական Ժողովին, կազմել Հանգանակիչ Յանձնախումբ մը, բաղկացած տեղւոյն յառաջաւոր անձնաւորութիւններէն: Յանձնախումբին մաս կազմեցին Ազնուափայլ Տիկ. Սառա Թադեւսեան, իրաքի հայոց Տիկեանց Տիկեան: Փոօ. Տօք. Յակոբ Զօպանեանը, իրաքի հայութեան ամենէն պատուական ազգայիններէն մին, որ ազգին իրապէս պատիւ բերող հայերէն եւ բժիշկներէն մին է Պաղտատի մէջ: Պ. Մեսրոպ Թադեւսեան Պաղտատեանի ազնուական ու ճամարիս հայր: Պ. Կարապետ Միլինեան բանիբուն եւ ազգային գիտակցութեամբ լեցուած ուժեղ անձնաւորութիւն մը: Պ. Գառնիկ Գաւաթեան պատուական ազգային մը, եւ Պ. Գրիգոր Ալիանա, գիտակից եւ մատուցական հայ մը:

Հանգանակիչ Յանձնախումբը կազմեց իր գիւտը ահեմապետութեամբ Փոօ. Տօք. Յ. Զօպանեանի, գանձապետութեամբ Պ. Մեսրոպ Թադեւսեանի եւ ֆարսուղարութեամբ Պր. Գրիգոր Ալիանաի եւ սկսան գործի:

Իսկ Հանգանակիչ Յանձնախումբի Պատույն նախագահ եւ ընդհանուր հովանաւորն ու առաջնորդը կը հանդիսանար իրաքի նախկին առաջնորդ Գե. Տ. Ռուբեն Ս. Ար. Բեպիսկոյան Մանասեանը: Հոս սրբի պատրաստ կ'զգամ յանուն Նորին Ամենապատուութեան եւ Սրբոց Յակոբեանց բովանդակ Միաբանութեան եւ վանաբնակ մերազն ժողովուրդ: